

զենմամբ գառանց, յօղևաց եւ յայծից՝ պատարագեալք մտով օրհնութեան»։ որոց վերայ երբ յաւելուենք «մրգաց» բաժինն ալ (Արշ. ԼԳ), մեր առջեւ կ'ունենանք ազնուական կոչնոց ճոխութիւնը¹։ Ասոր մէջ սակայն զգալի է տօնիս սեպհական ճաշացուցակ մը, որ կը կազմուի ընտանի անասնոց մսերով. այս ինքն անոցմով միայն՝ որ յարմար էին մատաղի (աստ, 327). որով բացակայ են սեղանէս վայրի՝ թէեւ սուրբ չորքոտանիք, եւ ծովայինք նոյն իսկ արգելուած, ինչպէս կ'իմացնէ Արշարունին՝ ըսելով. «Այլ ոչ (կերիցես) ձուկն՝ վիշապացեալ ի խորս խաւարի մնալով՝ ատելին քեզ» (անդ). այս ինքն՝ զի ձուկը ջրին ներքեւ բնակելով, կը նրմանէր վիշապակերպ խաւարաբնակ սատանային, եւ այս պատճառաւ այսօր խորշելի էր, ըստ որում մատաղի ալ նոյն յարմար (աստ, 327)։ Սեղանիս լրութեան համար անպակաս են նաեւ «բանք ուրախութեան», բայց պարկեշտութեան սահմանի մէջ, եւ աննման սովորական կոչնոց մէջ ընդունուած յիմարաբանութեանց (աստ, 207)։

1. Հմտ. աստ, 175, '78-83, 216, '26։